ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԵԱՏՄ ԱՆԴԱՄ ԵՐԿՐՆԵՐԻ ՓՈԽԱԴԱՐՁ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

ՄԻՍԱԿ ԱՎԱԳՅԱՆ

ԵԱՏՄ-ի՝ որպես տարածաշրջանային տնտեսական նորաստեղծ կառույցի զարգացումը պայմանավորված է մի շարք գործոններով, որոնցից հատուկ ուշադրության է արժանի կապիտալի ազատ շարժը անդամ երկրների միջև: Ընդհանրապես երկրների միջև ներդրումների ակտիվացումը ոչ միայն այդ երկրներում տնտեսական աճի ապահովման, այլև ինտեգրման գործընթացների խորացման և բազմակողմանի զարգացման մեծ խթան է: Փորձը ցույց է տալիս, սակայն, որ տարածաշրջանային տնտեսական ինտեգրման գործընթացների վրա փոխադարձ ներդրումների ազդեցությունը միանշանակ չէ: Որպես դրա վառ օրինակ կարելի է նշել վերջին տարիներին հետխորհրդային երկրների ինտեգրման միտումները, ըստ որի՝ «ռուսական կապիտալից թույլ կախվածություն ունեցող Ղազախստանը մտավ հետխորհրդային տարածքի խոշորագույն ինտեգրացիոն միավորման՝ ԵԱՏՄ կազմի մեջ, իսկ Ուկրաինան և Մոլդովան, որտեղ մինչև 2014 թվականը ռուսական վերազգային կորպորացիաների ներկայացվածությունը բավականին մեծ էր, ստորագրեցին Եվրոպական միության հետ ասոցացման մասին համաձայնագրեր»[1]:

Ներկայումս ԵԱՏՄ-ին բնորոշ են տարածաշրջանային ֆինանսատնտեսական ճգնաժամերը, Ռուսաստանի նկատմամբ պատժամիջոցները, տնտեսությունների համակողմանի զարգացման ոչ բարձր մակարդակը, ռազմաքաղաքական հակամարտությունները (Ռուսաստան-Ուկրաինա, Հայաստան-Ադրբեջան) և դրանցով պայմանավորված՝ ռազմական ծախսերի մեծացումը, օտարերկրյա ներդրումների ցածր մակարդակը, արտաքին պարտքի ծավալների աճը և այլն: Այս խնդիրների լուծումը կամ մեղմումը նախ և առաջ պահանջում է ԵԱՏՄ անդամ երկրների միջև բազմակողմանի տնտեսական փոխհամագործակցության խթանում, որը կարող է նպաստել տնտեսական ինտեգրման արդյունավետության մակարդակի և երկրների միջազգային մրցունակության բարձրացմանը: Այս առումով կարևորվում է ոչ միայն առևտրային, այլև փոխադարձ ներդրումային գործընթացների ակտիվացումը, ինչն իր հերթին երրորդ երկրներից կապիտալի ներգրավման բարենպաստ պայմաններ է ստեղծում:

[1] "Оптимизация инвестиционных связей современной России". М., 2016, с. 22.

ԵԱՏՄ երկրների շարքում ՕՈւՆ-ների ներգրավման ամենամեծ ներուժն ունի Ռուսաստանը, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ այստեղ բնակվում է ԵԱՏՄ բնակչության զգալի մասը, առկա է սպառման ընդարձակ շուկա և հումքային ռեսուրսների մեծ պաշար: Բացի այդ, ի տարբերություն ԵԱՏՄ անդամ մյուս երկրների, միայն Ռուսաստանն ունի անմիջական ելք դեպի ծով կամ օվկիանոս, ինչը զգալի նշանակություն ունի բեռնափոխադրումների ծախսերի կրճատման առումով: Սակայն միաժամանակ պետք է նշել, որ Ռուսաստանում ներկայումս առկա են մի շարք խնդիրներ, որոնք անբարենպաստ պայմաններ են առաջացնում ՕՈւՆ-ների ինտենսիվ ներգրավման համար: Արտաքին քաղաքական և տնտեսական ոչ կայուն վիճակը, Արևմուտքի տնտեսական սահմանափակումները և ռուս-ուկրաինական հիմնախնդիրը, տնտեսության կառուցվածքում հումքային ոլորտների գերակշռումը, ինչպես նաև գիտատարության և տեխնոլոգատարության համեմատաբար ցածր մակարդակը Ռուսաստանում ՕՈւՆ-ների ակտիվ աճը խոչընդոտող լուրջ գործոններ են:

Ռուսաստանի՝ որպես ԵԱՏՄ շրջանակներում ինտեգրման գործընթացների խորացման գործում էական դեր ունեցող անդամ երկրի ներդրումային միջավայրը բարելավելու առումով այսօր կարևոր նշանակություն ունեն ենթակառուցվածքների զարգացմանը միտված միջոցառումների մշակումն ու իրականացումը, աջակցությունը բիզնեսի զարգացմանը, ներդրումային ոլորտին վերաբերող օրենսդրական դաշտի կատարելագործումը, ՕՈւՆ-ների համար օպտիմալ հարկային դրույքաչափերի սահմանումը և պետական համակարգում առկա կոռուպցիայի վերացումը: Սրանք այն խնդիրներն են, որոնց լուծումը կարող է նպաստել ոչ միայն ԵԱՏՄ, այլև երրորդ երկրներից կապիտալ ներդրումների ակտիվացմանը:

Բելառուսը ևս ունի մի շարք առավելություններ, որոնք կարող են նպաստավոր պայմաններ ստեղծել ոչ միայն ԵԱՏՄ երկրներից, այլև ամբողջ աշխարհից լայնածավալ ՕՈւՆ-ներ ներգրավելու համար: Դրանցից են աշխարհագրական բարենպաստ դիրքը, էժան և որակյալ աշխատուժը, տրանսպորտային, լոգիստիկ և էներգետիկ ենթակառուցվածքների զարգացածությունը:

Չնայած վերոնշյալ դրական կողմերին՝ այնուամենայնիվ Բելառուսի տնտեսությունում նույնպես կան մի շարք թերություններ, որոնք բացասաբար են անդրադառնում այդ երկիր ՕՈւՆ-ների ակտիվ ներհոսքի վրա: Դրանցից են.

1. *պետական սեփականության մեծ չափաբաժինը տնտեսության մեջ*. ներկայումս Բելառուսի արդյունաբերական արտադրանքի ավելի քան 70%-ը բաժին է ընկնում պետական հատվածին, իսկ մասնավորեցման գործընթացը բավականին դանդաղ է և բարդ,

2. *բնական ռեսուրսների բացակայությունը* (բացառությամբ անտառների, կալիումի աղի և մի քանի տեսակի հանածոների), որը նվա-

զեցնում է հումքային ոլորտներում ՕՈւՆ-ների ներգրավման հնարավորությունները,

3. գների նկատմամբ պետական վերահսկողությունը,

4. հումքի և ռեսուրսների հասանելիության նկատմամբ թաքնված խտրականությունը,

5. *մեծաքանակ հաշվետվությունները, պետական մարմինների կողմից հաճախակի ստուգումները, վարչարարության մեծ չափերը*[2]:

Ղրղըզստանում նույնպես առկա են ՕՈւՆ-ների ներգրավման լայն հնարավորություններ: Էժան աշխատուժը և էլեկտրաէներգիան, հիդրոէներգետիկ առատ ռեսուրսները, հարկային և առևտրային մրցունակ ռեժիմները, դեպի հարևան երկրների՝ Ռուսաստանի և Ղազախստանի շուկաներ ազատ մուտք գործելու հնարավորությունները այն հիմնական առավելություններն են, որոնք կարող են տնտեսության տարբեր ոլորտներում ՕՈւՆ-ների ներգրավման խթան դառնալ: Ղրղըզստանում ՕՈւՆ-ների մեծ մասն իրականացվել է հանքարդյունաբերության ոլորտում, մինչդեռ ներդրումային հնարավորությունները մեծ են նաև տնտեսության այլ ճյուղերում, մասնավորապես՝ կարի և տեքստիլ արտադրության, զբոսաշրջության և ագրոարդյունաբերության ոլորտներում: Երկրում առաջնային են համարվում օտարերկրյա ներդրումներին վերաբերող օրենսդրության հետևողական կիրառումը, դատական համակարգի և հակակոռուպցիոն քաղաքականության կատարելագործումը, պետական կառավարման համակարգի թափանցիկության մակարդակի բարձրացումը, պետական և մասնավոր շահերի պաշտպանությանը միտված հավասարակշռված քաղաքականությունը[3]:

Չնայած կապիտալի ներգրավման լավ պայմանների առկայությանը (հատկապես հանքարդյունաբերության ոլորտում)՝ Ղրղըզստանում ներդրումային գրավչությունը բավականին ցածր է, որի պատճառը, առաջին հերթին, այդ երկրի քաղաքական անկայունությունն է, հատկապես վերջերս սրված ղազախա-ղրղըզական հարաբերությունները: Բացի այդ, Ղրղըզստանում աշխատուժը, չնայած համեմատաբար էժան լինելուն, որակապես թույլ է, ինչը նույնպես զսպող դեր է կատարում կապիտալի ներգրավման համար, քանի որ ներդրողները ստիպված են կատարել լրացուցիչ ծախսեր՝ վերապատրաստելու աշխատողներին կամ արտերկրից ներմուծելու առավել բարձրորակ աշխատուժ: Ղրղըզստանում ՕՈւՆ-ների ակտիվ ներգրավմանը խոչընդոտում է նաև նորարարական տեխնոլոգիաների զարգացման խիստ ցածր մակարդակը:

Ինչ վերաբերում է Ղազախստանին, ապա պետք է նշել, որ այն առավելապես մասնագիտացել է հումքի արդյունահանման մեջ: Թեև այդ երկրում աստիճանաբար քայլեր են ձեռնարկվում ներդրումային միջա-

---

[2] Տե՛ս «Мониторинг взаимных инвестиций в странах СНГ-2016». СПб., 2016, էջ 53-54:

[3] Տե՛ս «Обзор инвестиционной политики: Кыргызстан». Конференция Организации Объединенных Наций по торговле и развитию // Организация Объединенных Наций. Нью-Йорк и Женева, 2016, с. VIII:

վայրի բարելավման միջոցով արդյունահանումից կախվածությունը նվազեցնելու ուղղությամբ, այնուամենայնիվ հանքային ռեսուրսները շարունակում են մնալ տնտեսության հիմքը, ինչը մեծացնում է հատկապես այդ ոլորտում ներդրումների ներգրավման հնարավորությունները[4]: Ղազախստանում ներդրումների համար առավել գրավիչ ուղղություններից է նաև գյուղատնտեսությունը: Մինչդեռ ներքին արտադրությունը զարգացնելու առումով Ղազախստանը կրում է մի շարք դժվարություններ՝ պայմանավորված տրանսպորտային մեծ ծախսերով և սպառման ոչ մեծ շուկայով: Դա նվազեցնում է արտադրության մեջ ներդրումների հետգնման տեմպերն ու գործարար վստահությունը, ինչն էլ արգելակում է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին ներդրումները[5]:

Հայաստանը ևս օտարերկրյա ներդրումների նկատմամբ իրականացնում է «բաց դռների» քաղաքականություն: Այն կարգավորվում է 31.07.1994 թ. ընդունված՝ «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքով, որը սահմանում է «Հայաստանի Հանրապետության տարածքում օտարերկրյա ներդրումների իրականացման իրավական, տնտեսական ու կազմակերպական հիմքերը և ուղղված է օտարերկրյա ներդրողների իրավունքների, օրինական շահերի, գույքի պաշտպանության ապահովմանը, օտարերկրյա նյութական և ֆինանսական միջոցների ներգրավման, առաջավոր տեխնոլոգիաների, կառավարման և կազմակերպման փորձի ներդրման ու արդյունավետ օգտագործման նախադրյալների ստեղծմանը»[6]: Համաձայն Հայաստանի Հանրապետության ներդրումային քաղաքականության հայեցակարգի՝ Հայաստանում ներդրումների խրախուսումն իրականացվում է հիմնականում հետևյալ ուղղություններով.

1. ֆինանսական միջոցների հասանելիության ապահովում,
2. ՓՄՁ ներդրումների խրախուսում,
3. վերազգային կորպորացիաներից ներդրումների խրախուսում,
4. ազատ տնտեսական գոտիների կայացում,
5. էներգախնայող և բարձր տեխնոլոգիական ներդրումների խրախուսում,
6. տարածքային համաչափ զարգացմանը նպաստող ծրագրերի խրախուսում[7]:

---

[4] Տե՛ս http://group-global.org/ru/publication/67220-vozobnovlyaemye-istochniki-energii-kak-perspektivnoe-napravlenie-investiciy (մուտքը՝ 01.11.2017 թ.):

[5] Տե՛ս **Тайбекулы А.** Казахстан и евразийская интеграция: ожидания и реальность. Доклад. Ноябрь 2016 г. Астана–Алматы: Институт мировой экономики и политики при Фонде Первого Президента Республики Казахстан – Лидера Нации, 2016, էջ 40:

[6] «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 31.07.1994 թ., համարը՝ ՀՕ-115, աղբյուրը՝ http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=34872 (մուտքը՝ 01.11.2017 թ.):

[7] Տե՛ս «Հայաստանի Հանրապետության ներդրումային քաղաքականության հայեցակարգ», գլուխ 3, 22-րդ կետ, ՀՀ կառավարության 2015 թ. հոկտեմբերի 8-ի նիստի № 45 արձանագրային որոշման հավելված, աղբյուրը՝ http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=101571 (մուտքը՝ 01.11.2017 թ.):

Ունենալով սահմանափակ ներքին ռեսուրսներ՝ Հայաստանի տնտեսական զարգացման ներկա փուլում է՛լ ավելի է կարևորվում օտարերկրյա կապիտալի դերը ոչ միայն վերոնշյալ ուղղություններում, այլև այնպիսի ոլորտներում, որոնց զարգացման համար մեր երկրում առկա են բարենպաստ նախադրյալներ: Դրանցից են զբոսաշրջությունը, տեղեկատվական տեխնոլոգիաները, սննդամթերքի արդյունաբերությունը, ջերմոցային տնտեսությունները և հանքարդյունաբերությունը: Այդ կապակցությամբ անհրաժեշտ է աշխատանքներ իրականացնել ՀՀ-ում ներդրումային միջավայրի բարելավման, օրենսդրական դաշտի կատարելագործման և մրցակցային շուկայական հարաբերությունների խորացման ուղղությամբ: ՀՀ-ում ՕՈՒՆ-ների ակտիվացման գործում կարևոր նշանակություն կարող է ունենալ նաև այլ երկրների հետ ներդրումային հիմնադրամների ստեղծումը: Այդպիսի օրինակ է հայ-ռուսական ներդրումային հիմնադրամը, որի ստեղծման մասին համաձայնագիրը կնքվել է 2017 թ. մարտի 3-ին «Ուղղակի ներդրումների ռուսական հիմնադրամ» կառավարման ընկերության (ՌԴ) և «ՓՄՁ ներդրումներ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի (ՀՀ) միջև: Այն ուղղված է ներդրումային գրավչություն ունեցող ծրագրերի ֆինանսավորմանը՝ նպաստելու հայ-ռուսական առևտրատնտեսական և ներդրումային համագործակցության զարգացմանը և Հայաստանը ԵԱՏՄ-ին ինտեգրելու գործընթացների խորացմանը:

Ընդհանուր առմամբ ինտեգրացիոն գործընթացներն ավելի արդյունավետ կարող են լինել, եթե դրանց մասնակից անդամ երկրները տնտեսապես փոխկապակցված են: Ցավոք, ԵԱՏՄ ոչ բոլոր անդամ երկրներն ունեն տնտեսական սերտ հարաբերություններ, իսկ ճյուղային կառուցվածքներում դրանք ընդհանրապես սահմանափակ են: Այդ բացը լրացնելու մեխանիզմներից մեկը անդամ երկրներում ազատ տնտեսական գոտիների ստեղծումն է: Օրինակ, ըստ տնտեսագետ Թ. Մանասերյանի՝ «կոոպերացիայի և համագործակցության համար հավասարապես կարևոր է ազատ առևտրի գոտու ստեղծումը Հայաստանի և Իրանի միջև, որը սպասարկում է նաև ԵԱՏՄ երկրներին: Շատ ռուսական ընկերություններ արդեն տրամադրված են ներդրումներ կատարելու այդ գոտում, Ռուսաստանի գործարար շրջանակները շահագրգռված են մասնակցելու այդ գոտու աշխատանքներին, քանի որ այնտեղ կարելի է տեսնել ներուժ ոչ միայն Ռուսաստանի և Հայաստանի երկկողմ համագործակցությունում, այլև բազմակողմ հարաբերություններում՝ իրանական շուկա դուրս գալու հնարավորությամբ»[8]:

Դիտարկելով ԵԱՏՄ-ում 2013-2016 թթ. ընթացքում կատարված ընդհանուր ՕՈՒՆ-ների շարժընթացը՝ կարելի է նկատել, որ դրանց միտումներն անդամ երկրներում միանման չեն. եթե ՕՈՒՆ-ների ծավալները Հա-

[8] http://finport.am/full_news.php?id=32008&lang=1 (մուտքը՝ 04.11.2017 թ.):

յաստանում, Ղազախստանում և Ռուսաստանում 2016 թ. նախորդ տարվա համեմատ արձանագրել են էական աճ՝ կազմելով համապատասխանաբար՝ 0.3 մլրդ (աճելով 1.9 անգամ), 17.6 մլրդ (2.7 անգամ) և 32.5 մլրդ (4.7 անգամ) ԱՄՆ դոլար, ապա Բելառուսում և Ղրղզստանում դրանք, ընդհակառակը, նվազել են՝ կազմելով համապատասխանաբար՝ 1.2 մլրդ (նվազելով 24.7%-ով) և 0.5 մլրդ (59.1%-ով) ԱՄՆ դոլար (տե՛ս աղյուսակ 1):

Աղյուսակ 1

ԵԱՏՄ անդամ երկրներում կատարված ՕՈՒՆ-ները 2013-2016 թթ.[9]

մլն ԱՄՆ դոլար

	2013		2014		2015		2016	
	Ընդամենը	*այդ թվում՝ ԵԱՏՄ-ից*	*Ընդամենը*	*այդ թվում՝ ԵԱՏՄ-ից*	*Ընդամենը*	*այդ թվում՝ ԵԱՏՄ-ից*	*Ընդամենը*	*այդ թվում՝ ԵԱՏՄ-ից*
Հայաստան	*346*	94	*404*	109	*178*	130	*338*	-91
Բելառուս	*2,246*	819	*1,862*	556	*1,652*	624	*1,244*	487
Ղազախստան	*10,011*	365	*7,225*	485	*6,451*	214	*17,647*	191
Ղրղզստան	*626*	67	*348*	148	*1,142*	513	*467*	229
Ռուսաստան	*69,219*	507	*22,031*	460	*6,853*	513	*32,539*	414

2016 թ. ընթացքում ԵԱՏՄ երկրներից ՕՈՒՆ-ների ներգրավման առումով նվազման միտում է նկատվել անդամ բոլոր պետություններում, ինչը վկայում է ԵԱՏՄ-ում գործող տնտեսավարող սուբյեկտների կողմից տարածաշրջանի անդամ երկրների նկատմամբ ներդրումային հետաքրքրվածության մակարդակի անկման մասին, որն էլ, իր հերթին, հանգեցրել է ԵԱՏՄ երկրների միջև փոխադարձ ներդրումային ակտիվության նվազմանը: Սա նշանակում է, որ ԵԱՏՄ անդամ երկրների միջև ծավալվող տնտեսական ինտեգրման գործընթացները դեռևս չեն ապահովում տարածաշրջանային ինտեգրմանը բնորոշ ցանկալի տնտեսական արդյունք՝ դրանով իսկ նվազեցնելով այդ գործընթացների արդյունավետությունը:

Ինչպես երևում է գծապատկեր 1-ից, ԵԱՏՄ երկրների կողմից ներգրավված ՕՈՒՆ-ների ընդհանուր ծավալի մեջ ԵԱՏՄ-ից ներհոսած ՕՈՒՆ-ների ամենամեծ տեսակարար կշիռն ավանդաբար ունեցել է Ղրղզստանը, իսկ ամենափոքր մասնաբաժինը՝ Ռուսաստանը և Ղազախստանը: Ի դեպ, 2013-2016 թթ. ներգրավված ՕՈՒՆ-ների ընդհանուր ծավալում ԵԱՏՄ երկրներից ամենամեծ տեսակարար կշիռը և անկման ամենամեծ ցուցանիշը գրանցվել են Հայաստանում, համապատասխանաբար՝ 2015 թ. և 2016 թ.:

[9] Տե՛ս «Прямые инвестиции в Евразийском экономическом союзе. 2016 год (по оперативным данным)». Статистический бюллетень. Евразийская экономическая комиссия. М., 2017, էջ 11-15:

Գծապատկեր 1

ԵԱՏՄ երկրներից ներգրավված ՕՈՒՆ-ների տեսակարար կշիռը տվյալ երկրի ընդհանուր ՕՈՒՆ-ների մեջ 2013-2016 թթ. (%)[10]



Ինչ վերաբերում է ԵԱՏՄ անդամ երկրներում կուտակված փոխադարձ ՕՈՒՆ-ներին, ապա 2016 թ. վերջին դրանց ծավալը կազմել է 26.8 մլրդ ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով 13.6%-ով: Հատկանշական է, որ ԵԱՏՄ-ի գործունեության առաջին տարվա ընթացքում կուտակված ՕՈՒՆ-ները 2014 թ. համեմատ նվազել էին մոտ 6%-ով և կազմել 23.6 մլրդ ԱՄՆ դոլար, ինչը պայմանավորված էր մի կողմից՝ ազգային արժույթների դևալվացիայի պատճառով նախկինում ձևավորված ակտիվների արժեզրկմամբ[11], իսկ մյուս կողմից՝ այդ ժամանակաշրջանում Ռուսաստանի նկատմամբ կիրառվող արտաքին տնտեսական պատժամիջոցներով, որոնք բացասական ազդեցություն ունեցան այդ երկրի՝ ԵԱՏՄ տարածքում տնտեսական գործունեության ակտիվության վրա, որի հետևանքով նվազեցին նաև փոխադարձ առևտրի ծավալները:

Հարկ է նշել, որ ԵԱՏՄ տարածաշրջանում որպես հիմնական ներդրող հանդես է գալիս Ռուսաստանը, որին 2016 թ. վերջի դրությամբ բաժին է ընկնում կուտակված ՕՈՒՆ-ների արտահանման ծավալի 78.6%-ը (21.0 մլրդ ԱՄՆ դոլար): Ընդ որում՝ ռուսական ՕՈՒՆ-ների 40.5%-ն (8.5 մլրդ ԱՄՆ դոլար) ուղղվել է Բելառուս, 39.0%-ը (8.2 մլրդ ԱՄՆ դոլար)՝ Ղազախստան, 16.4%-ը (3.4 մլրդ ԱՄՆ դոլար)՝ Հայաստան և 4.1%-ը (0.9 մլրդ ԱՄՆ դոլար)՝ Ղրղզստան: ՕՈՒՆ-ների արտահանման ծավալով երկրորդ տեղում է Ղազախստանը, որին բաժին է ընկնում ԵԱՏՄ անդամ երկրներ ուղղված ՕՈՒՆ-ների 13.5%-ը (3.6 մլրդ ԱՄՆ դոլար): Ի տարբերություն ԵԱՏՄ երկրներում իրականացված ռուսական ՕՈՒՆ-ների աշխարհագրական բազմազանեցման համեմատաբար բարձր մակարդա-

---

[10] Աղյուսակը կազմվել է՝ «Прямые инвестиции в Евразийском экономическом союзе. 2016 год (по оперативным данным)». Статистический бюллетень. Евразийская экономическая комиссия, էջ 11-15-ի տվյալների հիման վրա:

[11] Տե՛ս «Мониторинг взаимных инвестиций в странах СНГ-2016», էջ 46:

կի՝ ղազախական ՕՈՒՆ-ների գերակշիռ մասը՝ մոտ 81.7%-ը (2.9 մլրդ ԱՄՆ դոլար), ուղղվել է Ռուսաստան, 16.7%-ը (0.6 մլրդ ԱՄՆ դոլար)՝ Ղրղզստան և միայն չնչին մասը՝ Բելառուս (1.6%): Երրորդ տեղում է Բելառուսը, որին բաժին է ընկնում ԵԱՏՄ անդամ երկրներ ուղղված ՕՈՒՆ-ների 7.8%-ը (2.1 մլրդ ԱՄՆ դոլար), որը հիմնականում (98.2%) ուղղվել է Ռուսաստան: Նշենք, որ Հայաստանի և Ղրղզստանի մասնակցությունը ԵԱՏՄ-ում ՕՈՒՆ-ների իրականացման գործում բավականին թույլ է (միասին վերցրած՝ նրանց տեսակարար կշիռը կազմում է արտահանված ՕՈՒՆ-ների ընդամենը 0.1%-ը) (տե՛ս աղյուսակ 2):

Ինչ վերաբերում է ԵԱՏՄ անդամ երկրների կողմից ներգրավված ՕՈՒՆ-ների կուտակային ծավալների կառուցվածքին, ապա պետք է նշել, որ, ի տարբերություն արտահանված ՕՈՒՆ-ների, այն ըստ երկրների համեմատաբար բազմազանեցված է: Ինչպես երևում է աղյուսակ 2-ից, 31.12.2016 թ. դրությամբ ներգրավված կուտակային ՕՈՒՆ-ների 32.1%-ը բաժին է ընկնում Բելառուսին, 30.8%-ը՝ Ղազախստանին, 18.7%-ը՝ Ռուսաստանին, 12.9%-ը՝ Հայաստանին և 5.5%-ը՝ Ղրղզստանին, ընդ որում՝ Ռուսաստանին է պատկանում Հայաստանում, Բելառուսում և Ղազախստանում կուտակված ՕՈՒՆ-ների՝ ԵԱՏՄ երկրներից ներհոսքի զգալի մասը (համապատասխանաբար՝ 100%, 99.1% և 99.6%) և Ղրղզստանում կուտակված ՕՈՒՆ-ների կեսից ավելին (58.5%): Ինչ վերաբերում է Ռուսաստանում կուտակված ԵԱՏՄ-ից ներհոսած ՕՈՒՆ-ներին, ապա դրանց 58.8%-ը պատկանում է Ղազախստանին, 41.0%-ը՝ Բելառուսին և 0.2%-ը՝ Հայաստանին:

Աղյուսակ 2

Կուտակված փոխադարձ ՕՈՒՆ-ների ծավալները ԵԱՏՄ-ում՝ ըստ երկրների՝ 31.12.2016 թ. դրությամբ[12]

մլն ԱՄՆ դոլար

		Ներդրում					Ընդամենը	%
		Հայաստան	Բելառուս	Ղազախստան	Ղրղզստան	Ռուսաստան		
Ներդրավում	Հայաստան	-	0	0	0	3,441	3,441	12.9
	Բելառուս	16	-	57	2	8,522	8,597	32.1
	Ղազախստան	0	34	-	0	8,212	8,246	30.8
	Ղրղզստան	0	3	605	-	858	1,466	5.5
	Ռուսաստան	8	2,054	2,948	0	-	5,010	18.7
Ընդամենը		24	2,091	3,610	2	21,033	26,760	100.0
%		0.1	7.8	13.5	0.0	78.6	100.0	

[12] Տե՛ս «Мониторинг взаимных инвестиций в странах СНГ-2017». СПб., 2017, էջ 41:

Այսպիսով, աղյուսակ 2-ից պարզ է դառնում, որ ԵԱՏՄ-ում փոխադարձ ներդրումներն ակտիվ են հիմնականում Ռուսաստան-Ղազախստան և Ռուսաստան-Բելառուս երկկողմ շրջանակներում, իսկ մնացած դեպքերում դրանք գրեթե զրոյական են կամ միակողմանի: Նկատենք, որ ԵԱՏՄ երկրների միջև ՕՈՒՆ-ներում միայն Ռուսաստանն է զուտ արտահանող երկիր, ինչը պայմանավորված է վերջինիս տնտեսության համեմատաբար մեծ չափերով և ԵԱՏՄ անդամ երկրների ընդհանուր ՀՆԱ-ի մեջ տվյալ երկրի ունեցած զգալի տեսակարար կշռով (2016 թ. տվյալներով՝ 86.6%)[13]:

ԵԱՏՄ երկրներում կուտակված փոխադարձ ՕՈՒՆ-ների ճյուղային կառուցվածքի վերլուծությունը ցույց է տալիս (տե՛ս աղյուսակ 3), որ 2016 թ. վերջի դրությամբ դրանց ավելի քան կեսը ներդրվել է վառելիքային համալիրի (43.8%) և գունավոր մետալուրգիայի (10.9%) ոլորտներում: Հատկապես վառելիքային ոլորտում կատարված լայնածավալ ՕՈՒՆ-ները պայմանավորված են Ռուսաստանի՝ այդ բնագավառում զբաղեցրած գերիշխող դիրքով, որն էլ նպաստել է ԵԱՏՄ անդամ մնացած երկրներում մեծածավալ ներդրումների իրականացմանը: Ինչպես երևում է աղյուսակ 5-ից, ԵԱՏՄ տարածքում անդամ երկրների կատարած 15 խոշորագույն ներդրումային նախագծերի մոտ կեսն իրականացվել կամ իրականացվում է հենց նշված ոլորտում: Կուտակված փոխադարձ ՕՈՒՆ-ների մասնաբաժինը մեծ է նաև կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների (9.6%), քիմիական համալիրի (8.1%) և ֆինանսական (6.1%) ոլորտներում:

Աղյուսակ 3

ԵԱՏՄ երկրներում կուտակված փոխադարձ ՕՈՒՆ-ների ճյուղային կառուցվածքը 31.12.2016 թ. դրությամբ (%)[14]

Ենթակառուցվածքային ցանցեր	3.6
Գունավոր մետալուրգիա	10.9
Վառելիքային համալիր	43.8
Կապ և տեղեկատվական տեխնոլոգիաներ	9.6
Ֆինանսական հատված	6.1
Տրանսպորտային համալիր	4.2
Մեքենաշինական համալիր	1.7
Զբոսաշրջային համալիր	3.4
Մանրամեծածախ առևտուր	3.6
Ծառայությունների ոլորտի այլ ճյուղեր	0.1
Մանրամեծածախ առեւտուր	1.1
Սև մետալուրգիա	0.3
Քիմիական համալիր	8.1
Ագրոպարենային համալիր	3.7

[13] Հաշվարկը կատարվել է «Евразийский экономический союз в цифрах: краткий статистический сборник», Евразийская экономическая комиссия, М., 2017, էջ 18-ի տվյալների հիման վրա:

[14] Տե՛ս «Мониторинг взаимных инвестиций в странах СНГ-2017», էջ 42:

Ինչ վերաբերում է ԵԱՏՄ առանձին անդամ երկրներից կուտակված փոխադարձ ՕՈՒՆ-ներին, ապա աղյուսակ 4-ից երևում է, որ Բելառուսում և Ղազախստանում ԵԱՏՄ մյուս երկրներից կատարված ՕՈՒՆ-ները բազմազան չեն, քանի որ վերջիններիս ճյուղային կառուցվածքում ՕՈՒՆ-ների զգալի մասը զբաղեցնում է վառելիքային համալիրը (համապատասխանաբար՝ 70.9% և 47.9%): Մինչդեռ Ռուսաստանում, Հայաստանում և Ղրղզստանում կատարված ՕՈՒՆ-ները փոքրինչ բազմազանեցված են. այսպես, 31.12.2016 թ. դրությամբ Ռուսաստանում ԵԱՏՄ երկրներից կուտակված ՕՈՒՆ-ների ճյուղային կառուցվածքում առաջին եռյակում են քիմիական (35.1%), ագրոպարենային (15.8%) և տրանսպորտային համալիրները (14.2%), Հայաստանում՝ ենթակառուցվածքային ցանցերը (25.4%), գունավոր մետալուրգիան (20.5%) և վառելիքային համալիրը (18.1%), իսկ Ղրղզստանում՝ կապը և տեղեկատվական տեխնոլոգիաները (26.3%), ենթակառուցվածքային ցանցերը (21.2%) և գունավոր մետալուրգիան (18.0%):

Աղյուսակ 4

ԵԱՏՄ երկրներում մյուս անդամ երկրներից կուտակված ՕՈՒՆ-ների ճյուղային կառուցվածքը 31.12.2016 թ. դրությամբ[15] %

Ռուսաստան		**Բելառուս**		**Ղազախստան**	
Քիմիական համալիր	*35.1*	Վառելիքային համալիր	*70.9*	Վառելիքային համալիր	*47.9*
Ագրոպարենային համալիր	*15.8*	Կապ և տեղեկատվական տեխնոլոգիաներ	*10.0*	Գունավոր մետալուրգիա	*23.5*
Տրանսպորտային համալիր	*14.2*	Ֆինանսական հատված	*8.4*	Կապ և տեղեկատվական տեխնոլոգիաներ	*10.4*
Զբոսաշրջային համալիր	*14.0*	Մանրամեծածախ առևտուր	*5.4*	Մանրամեծածախ առևտուր	*4.7*
Վառելիքային համալիր	*12.5*	Քիմիական համալիր	*2.1*	Ֆինանսական հատված	*3.3*
Շինարարական համալիր	*4.4*	Զբոսաշրջային համալիր	*1.1*	Քիմիական համալիր	*2.9*
Ֆինանսական հատված	*2.5*	Մեքենաշինական համալիր	*0.9*	Ագրոպարենային համալիր	*1.6*
Կապ և տեղեկատվական տեխնոլոգիաներ	*0.9*	Ագրոպարենային համալիր	*0.8*	Մեքենաշինական համալիր	*1.6*
Մեքենաշինական համալիր	*0.4*	Արդյունաբերության այլ ճյուղեր	*0.1*	Ենթակառուցվածքային ցանցեր	*1.1*
Մանրամեծածախ առևտուր	*0.2*	Շինարարական համալիր	*0.1*	Սև մետալուրգիա	*0.9*
Արդյունաբերության այլ ճյուղեր	*0.1*	Ծառայությունների ոլորտի այլ ճյուղեր	*0.1*	Տրանսպորտային համալիր	*0.9*
				Շինարարական համալիր	*0.7*
				Զբոսաշրջային համալիր	*0.6*
Ընդամենը	*100.0*	***Ընդամենը***	*100.0*	***Ընդամենը***	*100.0*

[15] Տե՛ս «Мониторинг взаимных инвестиций в странах СНГ-2017», էջ 44, 47, 48:

Հայաստան		Ղրղզստան	
Ենթակառուցվածքային ցանցեր	*25.4*	Կապ և տեղեկատվական տեխնոլոգիաներ	*26.3*
Գունավոր մետալուրգիա	*20.5*	Ենթակառուցվածքային ցանցեր	*21.2*
Վառելիքային համալիր	*18.1*	Գունավոր մետալուրգիա	*18.0*
Կապ և տեղեկատվական տեխնոլոգիաներ	*11.9*	Ֆինանսական հատված	*11.8*
Ֆինանսական հատված	*9.9*	Շինարարական համալիր	*8.6*
Տրանսպորտային համալիր	*9.4*	Վառելիքային համալիր	*8.0*
Մեքենաշինական համալիր	*1.7*	Մանրամեծածախ առևտուր	*3.4*
Զբոսաշրջային համալիր	*1.5*	Ծառայությունների ոլորտի այլ ճյուղեր	*1.1*
Մանրամեծածախ առևտուր	*1.2*	Մեքենաշինական համալիր	*0.9*
Ծառայությունների ոլորտի այլ ճյուղեր	*0.2*	Զբոսաշրջային համալիր	*0.7*
Ագրոպարենային համալիր	*0.1*		
Ընդամենը	***100.0***	***Ընդամենը***	***100.0***

Հատկանշական է, որ ԵԱՏՄ երկրներում փոխադարձ ՕՈՒՆ-ների մեծ մասն իրականացրել են ռուսական ընկերությունները, որոնց համար ԵԱՏՄ տարածաշրջանը համարվում է առավել գրավիչ և հարմարավետ՝ տնտեսական, տարածքային, լեզվական, մշակութային ընդհանրությունների և անդամ երկրների միջև պատմականորեն ձևավորված բազմաթիվ փոխկապակցված գործոնների շնորհիվ (տե՛ս աղյուսակ 5):

Նշենք, որ ԵԱՏՄ երկրներում կուտակված փոխադարձ ՕՈՒՆ-ների ավելի քան 1/3-ը (8.0 մլրդ ԱՄՆ դոլար) տեղաբաշխվել է ընդամենը երկու խոշոր ներդրումային նախագծերում, որոնցից առաջինը ռուսական «Գազպրոմ» ընկերության 5.0 մլրդ ԱՄՆ դոլար ներդրումն է Բելառուսի «Գազպրոմ Տրանսգազ Բելառուս» ընկերությունում, իսկ երկրորդը՝ ռուսական «Լուկոյլ» ընկերության 3.0 մլրդ ԱՄՆ դոլարը՝ Ղազախստանի արևմուտքում հումքի արդյունահանման նախագծերի մեջ: Մնացած ներդրումները ծավալով համեմատաբար փոքր են և չեն գերազանցում 1 մլրդ ԱՄՆ դոլարը:

Աղյուսակ 5-ից երևում է, որ 15 խոշորագույն ներդրումային նախագծերի ընդհանուր արժեքը կազմում է ԵԱՏՄ-ում կուտակված ՕՈՒՆ-երի 58.5%-ը: Նկատենք, որ այդ նախագծերի շարքում են նաև Հայաստանում Ռուսաստանի կատարած մի շարք ներդրումներ, մասնավորապես՝ ռուսական «Գազպրոմ» ՀԲԸ-ի՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ում (0.6 մլրդ ԱՄՆ դոլար) և Հրազդանի ՋԷԿ-ի 5-րդ բլոկում (0.44 մլրդ ԱՄՆ դոլար), ինչպես նաև «ՌԺԴ» ԲԲԸ-ի՝ «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ում (0.32 մլրդ ԱՄՆ դոլար) կատարած ներդրումները: Հետաքրքրական է, որ խոշորագույն 15 նախագծերի մեջ է նաև հայաստանյան ներդրումով նախագիծ. խոսքը «Մուլտի Գրուպ Կոնցեռն» ՍՊԸ-ի՝ Մինսկում կոնյակի շշալցման համատեղ ձեռնարկության («Հայկական ստանդարտ» ՍՊՀԶ) հիմնադրման մասին է (69% բաժնեմաս)[16], որի ներդրումային արժեքը մոտ 10 մլն ԱՄՆ դոլար է:

[16] Տե՛ս https://news.tut.by/economics/298790.html (մուտքը՝ 29.09.2017 թ.):

Աղյուսակ 5

ԵԱՏՄ-ում փոխադարձ ՕՈւՆ-ների շրջանակներում իրականացված խոշորագույն ներդրումային նախագծերը՝ 31.12.2015 թ. դրությամբ[17]

N	Ներդրող	Ընդունող երկիր	Կազմակերպություն/ նախագիծ	Նախագծի սկիզբ	Կուտակված ՕՈւՆ-ներ, *մլրդ ԱՄՆ դոլար*
1	«Գազպրոմ» (Ռուսաստան)	Բելառուս	«Գազպրոմ Տրանս-գազ Բելառուս»	2007	5.00
2	«Լուկոյլ» (Ռուսաստան)	Ղազախստան	Երկրի արևմուտքում հումքի արդյունա-հանման նախագծեր	2004	3.00
3	«ՄՏՍ» (Ռուսաստան)	Բելառուս	«Շարժական հեռա-համակարգեր» (49%)	2002	0.79
4	«Վերնի Կապիտալ» (Ղազախստան)	Ռուսաստան	Ritz-Carlton հյուրանոց (Մոսկվա)	2004	0.70
5	«Գազպրոմ» (Ռուսաստան)	Հայաստան	«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ	2002	0.60
6	«Իվոլգա-Հոլդինգ» (Ղազախստան)	Ռուսաստան	Կուրսկի մարզում ագրոպարենային համալիրի ձեռնարկություն	2003	0.60
7	«Տրանսնեֆտ» (Ռուսաստան)	Բելառուս	«Արևմուտք-Տրանս-նեֆտեպրոդուկտ»	1990	0.60
8	«Սլավնեֆտ» (Ռուսաստան)	Բելառուս	«Մոզիրի նավթավերամշակման գործարան» (42.6%)	1994	0.50
9	«Պոլիմետալ» (Ռուսաստան)	Ղազախ-ստան	«Կիզիլ» ոսկու հան-քավայրի նախագիծ	2014	0.46
10	«Գազպրոմ» (Ռուսաստան)	Հայաստան	Հրազդանի ՋԷԿ-ի 5-րդ բլոկ	2006	0.44
11	«Մերիդիան Կապիտալ» (Ղազախստան)	Ռուսաստան	«Դանոն Ռոսիա» (20%)	2005	0.40
12	«ԿազՄունայԳազ» (Ղազախստան)	Ռուսաստան	Կասպյան խողովա-կաշարի կոնսորցի-ումի ռուսական մաս-նաբաժին (20.8%)	1999	0.35
13	«ՌԺԴ» (Ռուսաստան)	Հայաստան	«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ	2008	0.32
14	«Բելոռուսնեֆտ» (Բելառուս)	Ռուսաստան	«Բելոռուսնեֆտ-Սի-բիր» նավթասերվի-սային ֆիրմա	2008	0.06
15	«Մուլտի Գրուպ Կոնցեռն» ՍՊԸ (Հայաստան)	Բելառուս	Մինսկում կոնյակի 22ալցման համատեղ ձեռնարկություն	2012	0.01
	Ընդամենը				***13.83***

Ամփոփելով կարող ենք նշել, որ ԵԱՏՄ անդամ երկրներում առկա են փոխադարձ ներդրումների ծավալների ընդլայնումը խոչընդոտող

[17] Տե՛ս «Мониторинг взаимных инвестиций в странах СНГ-2016», էջ 52:

ընդհանուր բնույթի մի շարք խնդիրներ, որոնցից կարելի է առանձնացնել հետևյալները.

- ոչ բարենպաստ ներդրումային միջավայրը (հարկային օրենսդրության անկատարություն, տնտեսությունների մենաշնորհայնացման բարձր մակարդակ, պետական աջակցության կամայական մոտեցումներ, հարկային արտոնությունների բացակայություն),
- ազգային արժույթների անկայունությունը,
- ներդրողների շահերի իրավական պաշտպանվածության ցածր մակարդակը,
- մասնագիտացված ներդրումային դատարանների բացակայությունը,
- ներդրումային երաշխիքների բացակայությունը,
- կոռուպցիոն ռիսկերի առկայությունը,
- որոշ անդամ երկրների միջև առևտրատնտեսական թույլ կապերը,
- անդամ երկրներին տրված միջազգային վարկանիշների ոչ բավարար մակարդակը:

Այսպիսով, կարելի է փաստել, որ ԵԱՏՄ-ն դեռևս չի նպաստել անդամ երկրների ներդրումային միջավայրի բարելավմանը և փոխադարձ ներդրումների ակտիվացմանը: Բացի այդ, ինտեգրացիոն խմբավորման շրջանակներում կատարվող փոխադարձ ներդրումների բնույթը (ներդրումների գերակշիռ մասը արդյունահանող և հումքային ոլորտներում, ենթակառուցվածքներում) հնարավորություն չի տալիս խորացնելու ինտեգրացիոն կապերը արտադրական կոոպերացման աճի ուղղությամբ, օգտագործելու անդամ երկրներում առկա գիտատեխնոլոգիական ներուժը և կատարելու ներդրումներ երկարաժամկետ նախագծերում: Մինչդեռ ԵԱՏՄ երկրներում բազմոլորտ ներդրումների համար համապատասխան միջավայրի ձևավորումը կարող է ստեղծել տնտեսության ճյուղային բազմազանեցման և արդիականացման հնարավորություն, որն էլ, իր հերթին, ապագայում կարող է հիմք դառնալ ոչ միայն անդամ երկրների տնտեսական և սոցիալական զարգացման, այլև տնտեսությունների ակտիվացման գործում ոչ հումքային ոլորտների դերի բարձրացման: Ըստ այդմ՝ որպես փոխադարձ ներդրումների ակտիվացման խթան կարող են դառնալ ԵԱՏՄ երկրների միջև համատեղ ներդրումային հիմնադրամների ձևավորումը, փոխադարձ առևտրի ընդլայնումը, գիտատեխնիկական փոխհամագործակցության զարգացումը, անդամ երկրներում գործող ազատ տնտեսական գոտիների գործունեության արդյունավետության բարձրացմանն ուղղված հարկային և մաքսային քաղաքականության կատարելագործումը, արտահանման ֆինանսավորման համակարգի զարգացումը և վենչուրային կապիտալի ներգրավման հնարավորությունների ընդլայնումը:

Բանալի բառեր – *օտարերկրյա ուղղակի ներդրումներ, ինտեգրում, ներդրումային միջավայր, ֆինանսական միջոցներ, կապիտալի շարժ*

МИСАК АВАГЯН – *Оценка взаимной инвестиционной активности стран-членов ЕАЭС.* – Эффективность интеграционных процессов обусловлена свободным перемещением между странами – участниками союза не только товаров и услуг, но также капитала и труда. Для дальнейших успехов Евразийского экономического союза важно обеспечить активное движение всех производственных факторов. В статье представлены основные особенности привлечения инвестиций государствами-членами ЕАЭС, а также динамика взаимных инвестиций в рамках организации и оценка их активности.

Ключевые слова: *прямые иностранные инвестиции, интеграция, инвестиционная среда, финансовые ресурсы, движение капитала*

MISAK AVAGYAN – *The Assessment of Mutual Investment Activity of the EAEU Member Countries.* – The effectiveness of integration processes is conditioned by the free movement of not only of goods and services but also of capital and labor between countries of participants. For the further success of the Eurasian Economic Union, it is also important to ensure the active movement of all production factors. The article presents the main features of attracting investments by the EAEU member states, as well as the dynamics of mutual investments within the Union and the assessment of their activity

Key words: *foreign direct investment, integration, investment environment, financial resources, capital movements*